ԱՊՐԱՆՔՆԵՐԻԳՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՓԱԿ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՓՊՄԱՊՁԲ-19/47-23

ք. Երևան 17.02.2022թ

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Գնորդ, մի կողմից և «Անգա Գրուպ» ՍՊԸ-ն ի դեմս ընկերության տնօրեն Վ. Մելիք-Սարգսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը սահմանում են, որ՝

1.1 Վաճառողը մասնակցել է Գնորդի կողմից «Հանդերձանքի պարագաներ» ձեռքբերման N ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՓՊՄԱՊՁԲ-19/47, ծածկագրով կազմակերպված պետական գաղտնիք պարունակող փակ պարբերական մրցույթի նախաորակավորմանընթացակարգին (այսուհետև՝ ընթացակարգ) և գրանցվել է որպես հնարավոր մասնակից:

1.2 Վաճառողի կողմից հայտ ներկայացնելը պարտադիր չէ:

1.3 Հայտը Վաճառողի կողմից ներկայացվում էծանուցվելու օրվան հաջորդող յոթ օրացուցային օրվա ընթացքում՝ ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

1.4 Վաճառողը կարող է դադարեցնել փակ պարբերական մրցույթի սկզբնական պայմանագիրը՝ դրա մասին գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ծանուցելով Գնորդին:Սկզբնական պայմանագրի դադարեցումն ավտոմատ կերպով չի դադարեցնում դրա հիման վրա նախկինում կնքված պայմանագրերը: Սկզբնական պայմանագիրը դադարում է, դրա վերաբերյալ դիմումը Գնորդի մոտ մուտքագրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը:Այդ ընթացքում Վաճառողի մասին տվյալները հեռացվում ենսկզբնականպայմանագիր կնքած անձանց ցուցակից:

2. Կողմերի պատասխանատվությունը

2.1 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.2 Վաճառողը պարտավորվում է չհրապարակել (ցանկացած ձևով) որևէ մեկին (այդ թվում նաև հարազատներին) պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունները, որոնք կվստահվեն կամ հայտնի կդառնան սույն ընթացակարգի շրջանակներում:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

3.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն համաձայնագրի անբաժանելի մասը: Վաճառողի վավերապայմանների փոփոխության դեպքում սույն պայմանագրի փոփոխություն չի կնքվում: Վաճառողը նոր վավերապայմանների մասին գրավոր ծանուցում է Գնորդին:

3.3 Սույն պայմանագրինկատմամբկիրառվումէՀայաստանիՀանրապետությանիրավունքը:

3.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում:

3.5 Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

1. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 02522157	«Անգա Գրուպ» ՍՊԸ ՀՀ Կոտայքի մ., գ. Առինջ, Պ. Սևակի 6փ. 7/1 «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Հ/Հ 1150004103383307 ՀՎՀՀ 00494665 էլ. հասցեն՝ angagrup2021@mail.ru Հեռ. 010-62-59-11, 093-45-47-47 Տնօրեն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Վ. Մելիք-Սարգսյան